



Նպաստները հասկանալը

Բովանդակություն

Social Security. Հասարակ գաղափար	1
Ինչ է Ձեզ հարկավոր իմանալ Social Security-ի մասին երբ Դուք աշխատում եք	4
Ինչ է Ձեզ պետք իմանալ նպաստների մասին	5
Նպաստներ Ձեր ընտանիքի համար	8
Երբ պետք է դիմեք նպաստներ ստանալու համար	10
Supplemental Security Income (SSI) ծրագիր	11
Բողոքարկելու իրավունք	11
Անցանց “my Social Security” հաշիվ	12
Medicare	12
Որոշ փաստեր Social Security-ի վերաբերյալ	15
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	16

Social Security. Հասարակ գաղափար

Social Security-ն վերաբերում է գրեթե յուրաքանչյուր ընտանիքի, և, որոշակի պահի, ազդում է գրեթե բոլոր ամերիկացիների կյանքի վրա:

Social Security-ն օգնում է ծեր ամերիկացիներին, հաշմանդամ դարձած աշխատողներին և ծնողը կամ ամուսինը/

կինը մահացած ընտանիքներին: 2017թ.-ին մոտ 173 միլիոն մարդ աշխատել և վճարել են Social Security հարկերը և մոտ 62 միլիոն մարդ ստացել է ամսական Social Security նպաստներ:

Մեր նպաստառուների մեծ մասը թոշակառուներն ու նրանց ընտանիքներն են՝ 2017թ. դեկտեմբերին մոտ 45 միլիոն մարդ:

Սակայն երբեք նախատեսված չի եղել, որպեսզի Social Security-ն դառնա թոշակի անցած մարդկանց եկամտի միակ աղբյուրը: Social Security-ն փոխարինում է աշխատողի՝ նախքան թոշակի անցնելը ստացած եկամտի մի մասը՝ հիմնվելով Ձեր կյանքի ընթացքում վաստակածի վրա: Ձեր միջին աշխատավարձի գումարը, որը փոխարինվում է Social Security կենսաթոշակային նպաստներով, կարող է տարբեր լինել՝ կախված Ձեր վաստակած գումարից և թե երբ եք որոշել նպաստներ ստանալ: Եթե Դուք սկսում եք նպաստներ ստանալ 67 տարեկան հասակում, այս տոկոսը տատանվում է շատ ցածր գումարներ վաստակողների մոտ՝ 75 տոկոսի սահմաններում, միջին գումարներ վաստակողների մոտ՝ 40 տոկոսի սահմաններով, իսկ բարձր գումարներ վաստակողների մոտ՝ 27 տոկոսի սահմաններում: Եթե Դուք սկսեք նպաստներ ստանալ 67 տարեկանից հետո, այս տոկոսը ավելի բարձր կլինի: Եթե Դուք սկսեք նպաստներ ստանալ ավելի վաղ, այս տոկոսը ավելի ցածր կլինի: Ֆինանսական խորհրդատուների մեծ մասն ասում են, որ Ձեզ հարկավոր է նախքան թոշակի անցնելը ստացած եկամտի մոտ 70 տոկոսը, որպեսզի թոշակի անցնելուց հետո հարմարավետ ապրեք, ներառյալ՝ Ձեր Social Security նպաստները, ներդրումները և անձնական խնայողությունները:

Մենք ուզում ենք, որ Դուք հասկանաք, թե ինչ կարող է նշանակել Social Security-ն Ձեր և Ձեր ընտանիքի ապագայի համար: Այս հրատարակությունը՝ *Understanding the Benefits-ը*, բացատրում է Social Security թոշակի, հաշմանդամության և ժառանգորդի ապահովագրության ծրագրերի հիմունքները:

Ներկայիս Social Security համակարգն աշխատում է հետևյալ կերպ. երբ Դուք աշխատում եք, Դուք հարկեր եք վճարում Social Security-ին: Մենք հարկային գումարներն օգտագործում ենք, որպեսզի նպաստներ վճարենք՝

- Մարդկանց, ովքեր արդեն թոշակի են անցել,
- Մարդկանց, ովքեր հաշմանդամ են,
- Մահացած աշխատողների ժառանգորդներին, և
- Նպաստառուների խնամքի տակ գտնվող անձանց:

Հարկերի տեսքով վճարված գումարները չեն պահվում անձնական հաշվում Ձեզ համար, մինչև որ Դուք նպաստներ ստանաք: Մենք օգտագործում ենք Ձեր հարկերը, որպեսզի վճարենք այն մարդկանց, ովքեր հենց հիմա են նպաստներ ստանում: Ցանկացած չօգտագործված գումար գնում է Social Security նպատակային հիմնադրամ, այլ ոչ թե Ձեր անունով բացված անձնական հաշիվ:

Social Security-ն ավելին է, քան թոշակի անցնելը

Շատերը մտածում են, որ Social Security ընդամենը թոշակի անցնելու ծրագիր է: Նպաստներ ստացողների մեծ մասը թոշակի անցած անձինք են, սակայն մյուսները ստանում են նպաստներ, քանզի նրանք՝

- Հաշմանդամ են,
- Նպաստներ ստացող անձի կին/ամուսին կամ երեխա են,
- Social Security ստացող անձի կամ դրա համար իրավունակ անձի ամուսնալուծված կին/ամուսին են,
- Մահացած աշխատողի կին/ամուսին կամ երեխա են,
- Մահացած աշխատողի ամուսնալուծված կին/ամուսին են,
- Մահացած աշխատողի խնամքի տակ գտնվող ծնող են:

Կախված իրավիճակից, Դուք կարող եք ցանկացած տարիքում իրավունակ լինել՝ Social Security ստանալու համար: Իրականում, Social Security ավելի շատ նպաստներ է վճարում երեխաներին, քան որևէ այլ պետական ծրագիր:

Ձեր Social Security հարկերը

Մենք օգտագործում ենք Ձեր և այլ աշխատողների կողմից համակարգին վճարվող Social Security հարկերը Social Security նպաստներ վճարելու համար:

Դուք Social Security հարկերը վճարում եք Ձեր վաստակած գումարի հիման վրա՝ մինչև որոշակի գումարը: 2018թ.-ին այդ գումարը կազմում է \$128,400:

Medicare հարկեր

Դուք վճարում եք Medicare հարկեր Ձեր բոլոր աշխատավարձերից կամ, ինքնազբաղվածության դեպքում՝ Ձեր զուտ վաստակից: Այս հարկերը նախատեսված են Medicare ապահովագրության համար:

Եթե դուք աշխատում եք այլ անձի մոտ	Սոցիալական ապահովության հարկը	Medicare-ի հարկը
Դուք վճարում եք	6.2%	1.45%
Ձեր գործատունը վճարում է	6.2%	1.45%
Եթե դուք անհատ ձեռնարկատեր եք		
Դուք վճարում եք	12.4%	2.9%

Լրացուցիչ Medicare հարկ

Աշխատողները վճարում են լրացուցիչ 0.9 տոկոս Medicare հարկ՝ որոշակի սահմանագիծը գերազանցող եկամտի դեպքում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս սահմանային գումարը՝ որը հիմնված է հարկային կարգավիճակի վրա՝

Հարկ վճարողի կարգավիճակ	Շեմային գումար
Համատեղ ներկայացնող ամուսնացած զույգ	\$250,000
Առանձին ներկայացնող ամուսնացած զույգ	\$125,000
Միայնակ անձ	\$200,000
Ընտանիքի ղեկավարը (իրավասու անձի հետ միասին)	\$200,000
Իրավասու այրի կին/տղամարդ՝ ինամատու երեխայի հետ միասին	\$200,000

Ուր են գնում Ձեր Social Security հարկային գումարները

2018թ.-ին, երբ Դուք աշխատում եք, Social Security-ի յուրաքանչյուր հարկային դուլարից 81 ցենտ գնում է նպատակային հիմնադրամ, որը ամսական նպաստներ է վճարում ներկայիս թոշակառուներին և իրենց ընտանիքներին, ինչպես նաև մահացած աշխատողների կանանց/ամուսիններին և երեխաներին: Մնացած 19 ցենտը գնում է նպատակային հիմնադրամ, որը նպաստներ է վճարում հաշմանդամ անձանց և իրենց ընտանիքներին:

Այս նպատակային հիմնադրամներից Social Security-ն վճարում է նաև Social Security-ի ծրագրերը կառավարելու հետ կապված ծախսերը: Social Security Administration-ը հանդիսանում է դաշնային կառավարության ամենից արդյունավետ գործակալություններից մեկը, և մենք աշխատում ենք ամեն օր ավելի բարելավել այն: Social Security-ի յուրաքանչյուր հարկային դուլարի դիմաց մենք վճարում ենք մեկ փենիից պակաս՝ ծրագիրը կառավարելու համար:

Medicare հարկերի ամբողջ գումարը գնում է նպատակային հիմնադրամ, որը վճարում է Medicare-ի բոլոր նպաստառուների հիվանդանոցային և հարակից խնամքի ծախսերի մի մասը: The Centers for Medicare & Medicaid Services-ը (Medicare և Medicaid ծառայությունների կենտրոններ) և ոչ թե Social Security Administration-ն է կառավարում Medicare-ը:

Ինչ է Ձեզ հարկավոր իմանալ Social Security-ի մասին երբ Դուք աշխատում եք

Ձեր Social Security համարը

Social Security-ի հետ Ձեր կապը Ձեր Social Security համարի միջոցով է: Ձեզ հարկավոր է աշխատանք գտնել և հարկեր վճարել: Մենք օգտագործում ենք Ձեր Social Security համարը հետևելու համար Ձեր եկամուտներին՝ երբ Դուք աշխատում եք և Ձեր նպաստներին՝ Social Security ստանալուց հետո:

Ձեզ մոտ մի պահեք Ձեր Social Security քարտը: Չգույշ եղեք, երբ որևէ մեկին տալիս եք Ձեր Social Security համարը: Այսօրվա դրությամբ, ինքնության գողությունն ամենաարագ աճող հանցագործություններից է: Հիմնականում, ինքնության գողերը օգտագործում են Ձեր Social Security համարը և Ձեր լավ վարկային պատմությունը՝ Ձեր անունով ավելի շատ վարկեր բացելու համար: Որից հետո նրանք օգտագործում են վարկային քարտերը և չեն վճարում հաշիվները:

Ձեր Social Security համարը և մեր գրառումները գաղտնի են: Եթե որևէ մեկը մեզանից խնդրի տրամադրել Ձեր մասին ունեցած մեր տեղեկությունները, մենք որևէ տեղեկություն չենք տրամադրի առանց Ձեր գրավոր համաձայնության, բացառությամբ դեպքերի, երբ օրենքով դա պահանջվում կամ թույլատրվում է:

Կապվեք մեզ հետ, եթե Ձեզ Social Security համար է հարկավոր, կամ եթե կորցրել եք Ձեր քարտը և ցանկանում եք նորն ունենալ, կամ հարկավոր է փոխել Ձեր անունը Ձեր ներկայիս քարտի վրա: Մենք կխնդրենք Ձեզ լրացնել հասարակ դիմումի ձև և կցանկանանք տեսնել որոշակի փաստաթղթեր: Մեզ հարկավոր կլինեն բնօրինակները կամ փաստաթղթերը տված կազմակերպության կողմից վավերացված կրկնօրինակները: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի պատճենները կամ նոտարի կողմից հաստատված պատճենները:

Social Security համար կամ փոխարինման քարտ ստանալու համար, Դուք պետք է ապացուցեք Ձեր ԱՄՆ քաղաքացիությունը կամ ներգաղթյալի կարգավիճակը, տարիքը և ինքնությունը: Փոխարինման քարտի համար մեզ հարկավոր չէ Ձեր ԱՄՆ քաղաքացիության ապացույցը և տարիքը, եթե մեր գրառումներում արդեն կան այդ տեղեկությունները: Որպես ԱՄՆ քաղաքացիության ապացույց, մենք ընդունում ենք միայն որոշակի փաստաթղթեր: Սրանք ներառում են՝ ԱՄՆ ծննդյան վկայականը, ԱՄՆ անձնագիրը, Հպատակագրման վկայականը կամ Քաղաքացիության վկայականը: Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք, մենք պետք է տեսնենք Ձեր ներգաղթյալի փաստաթղթերը, որոնք ապացուցում են աշխատանքի թույլտվությունը: Եթե Դուք աշխատանքի թույլտվություն չունեք, ապա կիրառվում են այլ կանոններ:

Ինքնության հաստատման համար մենք ընդունում ենք Ձեր անունը ցույց տվող ներկայիս փաստաթղթերը, ինքնությունը հաստատող տեղեկությունները և, նախընտրելի է, վերջերս արված լուսանկարը, ինչպիսիք են՝ վարորդական իրավունքը կամ նահանգի կողմից տրված անձը հաստատող այլ փաստաթուղթ կամ ԱՄՆ անձնագիր:

Ձեր Social Security քարտի վրա անվան փոփոխության համար դիմելու նպատակով, Դուք պետք է ներկայացնեք վերջերս տրված փաստաթուղթ, որը ապացուցում է, որ Ձեր անունը օրենքով փոփոխվել է:

Մշտապես ապահով պահեք Ձեր Social Security քարտը: Մենք սահմանափակում ենք փոխարինման քարտերի քանակը. Դուք կարող եք ստանալ տարվա մեջ՝ թվով երեք քարտ և կյանքի ընթացքում՝ թվով 10 քարտ: Օրինական անվանափոխությունը և այլ բացառությունները չեն մտնում այս սահմանափակման թվի մեջ: Օրինակ՝ ոչ-քաղաքացու կարգավիճակի փոփոխությունը, որը պահանջում է քարտի թարմացում, կարող է չհաշվարկվել այս սահմանափակման թվի մեջ: Այս սահմանափակումները կարող են չկիրառվել, եթե Դուք կարողանաք ապացուցել, որ քարտը Ձեզ հարկավոր է լուրջ խնդիր կանխելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10002-AM) *Your Social Security Number and Card:* Եթե քաղաքացի չեք, ընթերցեք (Publication No. 05-10096-AM) *Social Security Numbers for Noncitizens:*

Մեր բոլոր քարտային ծառայություններն անվճար են: Social Security-ն երբեք վճար չի պահանջում իր կողմից տրամադրվող քարտային ծառայությունների համար:

Ինչպես կարող եք իրավունակ դառնալ Social Security-ի համար

Երբ Դուք աշխատում և հարկեր եք վճարում, Դուք վաստակում եք Social Security “միավորներ”: 2018թ.-ին Դուք մեկ միավոր եք վաստակում՝ վաստակած յուրաքանչյուր \$1,320 համար՝ առավելագույնը մինչև չորս միավոր: Մեկ միավոր վաստակելու համար անհրաժեշտ գումարը հիմնականում աճում է ամեն տարի:

Մարդկանց մեծ մասին հարկավոր է 40 միավոր (10 տարվա աշխատանք), որպեսզի որակավորվեն նպաստներ ստանալու

համար: Երիտասարդներին ավելի քիչ միավորներ են հարկավոր, որպեսզի իրավունակ դառնան՝ հաշմանդամության նպաստներ ստանալու համար, կամ որպեսզի իրենց ընտանիքի անդամները իրավունակ լինեն ժառանգորդի նպաստներ ստանալու համար:՝ երբ աշխատողը մահանա:

Ինչ է Ձեզ պետք իմանալ նպաստների մասին

Social Security նպաստները փոխարինում են Ձեր եկամուտների միայն մի մասը, երբ Դուք թոշակի անցնեք, հաշմանդամ դառնաք կամ մահանաք: Ձեր նպաստի վճարումը հիմնվում է այն հանգամանքի վրա, թե որքան եք վաստակել Ձեր աշխատանքային կարիերայի ընթացքում: Կյանքի ընթացքում ավելի շատ վաստակը հանգեցնում է ավելի բարձր նպաստների: Եթե լինեն տարիներ, երբ Դուք չեք աշխատել կամ ցածր եկամուտ եք ունեցել, Ձեր նպաստի գումարը կարող է ավելի ցածր լինել, քան եթե Դուք հաստատուն շարունակաբար աշխատել եք:

Կենսաթոշակային նպաստներ

Ձեր կյանքի ամենակարևոր որոշումներից մեկը կլինի որոշելը, թե երբ եք ցանկանում թոշակի անցնել: Եթե որոշեք թոշակի անցնել, երբ հասել եք Ձեր կենսաթոշակային տարիքին, Դուք կստանաք Ձեր նպաստների ամբողջական գումարը: Մենք կկրճատենք Ձեր նպաստների գումարը, եթե Դուք թոշակի անցնեք նախքան կենսաթոշակային տարիքի հասնելը:

Լրիվ կենսաթոշակային տարիք

Եթե Դուք ծնվել եք 1943-ից մինչև 1960թթ., այն տարիքը, երբ կենսաթոշակային նպաստները վճարվում են լրիվ չափով, աստիճանաբար աճում է՝ հասնելով 67-ի: 2018թ.-ին, եթե Դուք ծնվել եք 1951թ. կամ դրանից առաջ, Դուք արդեն իրավունակ եք լրիվ չափով Social Security նպաստներ

ստանալու համար: Օգտագործեք հետևյալ աղյուսակը՝ գտնելու համար լրիվ չափով Ձեր կենսաթոշակի անցնելու տարիքը:

Ծննդյան տարի	Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը
1943-1954	66
1955	66 տարեկան և 2 ամսական
1956	66 տարեկան և 4 ամսական
1957	66 տարեկան և 6 ամսական
1958	66 տարեկան և 8 ամսական
1959	66 տարեկան և 10 ամսական
1960 և հետո	67

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Չնայած, որ լրիվ թոշակային տարիքը աճում է, Դուք դեռևս պետք է դիմեք Medicare նպաստների համար Ձեր 65-րդ տարեդարձից երեք ամիս առաջ: Եթե ավելի երկար սպասեք, Ձեր Medicare բժշկական ապահովագրությունը (Մաս B) և դեղատոմսով դեղերի ապահովագրությունը (Մաս D) կարող են ավելի թանկ լինել Ձեզ համար:

Հետաձգված կարգով թոշակի անցնելը

Եթե որոշեք հետաձգել նպաստների ստացումը՝ լրիվ կենսաթոշակային տարիքից ուշ ստանալու համար, ապա մենք կավելացնենք Ձեր նպաստները որոշակի տոկոսով, կախված Ձեր ծննդյան տարուց: Մենք ավելացումը կկատարենք ավտոմատ կերպով յուրաքանչյուր ամսվա համար՝ այն ժամանակվանից հաշված, երբ Դուք հասել եք լրիվ կենսաթոշակային տարիքի, մինչ այն ժամանակ, երբ սկսեք ստանալ նպաստները կամ դառնաք 70 տարեկան՝ որը որ ավելի շուտ տեղի ունենա: Հետաձգված թոշակի անցման միավորների մասին լրացուցիչ

տեղեկությունների համար այցելեք www.socialsecurity.gov/planners/retire/delayret.html:

Վաղաժամկետ կարգով թոշակի անցնելը

Դուք կարող եք սկսել նպաստներ ստանալ անգամ 62 տարեկանում: Մենք կրճատում ենք նպաստները, եթե Դուք վաղաժամկետ եք սկսում դրանք ստանալ: Յուրաքանչյուր ամիս նպաստը կրճատվում է մոտ կես տոկոսով՝ մինչև Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը: Օրինակ, եթե Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը 66 և 4 ամսականն է, և Դուք գրանցվել եք Social Security ստանալու համար 62 տարեկանում, ապա Դուք կստանաք Ձեր լրիվ նպաստների միայն 73.3 տոկոսը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Կրճատումն ավելի մեծ կլինի հաջորդող տարիներին, երբ լրիվ թոշակի անցնելու տարիքը մեծանա:

Եթե Դուք աշխատում և նպաստներ եք ստանում

Դուք կարող եք շարունակել աշխատել և դեռևս ստանալ կենսաթոշակային նպաստներ: Թոշակային տարիքին հասնելու ամսում (և դրանից հետո) ստացվաչ եկամուտները չեն կրճատի Ձեր Social Security նպաստները: Փաստորեն, լրիվ կենսաթոշակային տարիքից հետո աշխատելն կարող է ավելացնել Ձեր նպաստները: Սակայն, մենք կկրճատենք Ձեր նպաստները կենսաթոշակային տարիքին հասնելուն նախորդող ամիսների համար, եթե Ձեր եկամուտները գերազանցեն որոշակի սահմանները:

Եթե Դուք աշխատում եք, սակայն սկսել եք նպաստներ ստանալ մինչև լրիվ կենսաթոշակային տարիքը, մենք մեկ դուլար կկրճատենք յուրաքանչյուր վաստակած երկու դուլարի դիմաց, որ աշխատել եք տարեկան սահմանափակումից ավելի: 2018թ.-ին սահմանափակումը \$17,040 է:

Այն տարվա ընթացքում, երբ Դուք հասնում եք Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքին, մենք նպաստից կրճատում ենք մեկ դոլար մեկ այլ տարեկան սահմանափակումը գերազանցող յուրաքանչյուր երեք դոլարի համար (2018թ.-ին այս սահմանափակումը \$45,360) մինչև այն ամիսը, երբ Դուք հասնեք Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքին:

Երբ Դուք հասնեք Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքի, Դուք կարող եք շարունակել աշխատել, և մենք չենք կրճատի Ձեր Social Security նպաստները՝ անկախ Ձեր վաստակած գումարի չափից:

Ձեր նպաստների վրա աշխատանքի ազդեցության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10069-AM) *How Work Affects Your Benefits*:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Անձինք, ովքեր աշխատում և ստանում են հաշմանդամության կամ Supplemental Security Income վճարումներ, երևաբար կվում են եկամտի այլ կանոններին: Նրանք պետք է անմիջապես Social Security հայտնեն իրենց բոլոր եկամուտների մասին՝ անկախ եկամտի գումարի չափից:*

Կենսաթոշակային նպաստներ այրի կանանց և տղամարդկանց համար

Եթե Դուք ստանում եք այրի կնոջ կամ տղամարդու նպաստներ, ապա Դուք կարող եք անցնել Ձեր անձնական կենսաթոշակային նպաստների ստացմանը անգամ 62 տարեկանում, նկատի ունենալով, որ Ձեր կենսաթոշակային նպաստն ավելի շատ է, քան այն գումարը, որ Դուք ստանում եք Ձեր մահացած ամուսնու/կնոջ եկամուտների հիման վրա: Հաճախ Դուք կարող եք սկսել ստանալ մեկ նպաստ կրճատված դրույքաչափով և հետագայում փոխել մեկ այլ նպաստի՝ լրիվ դրույքաչափով, երբ հասնեք լրիվ կենսաթոշակային տարիքի: Կանոնները բարդ են և տարբեր կախված Ձեր իրավիճակից, այնպես որ խոսեք Social Security ներկայացուցչի հետ Ձեզ հասանելի տարբերակների վերաբերյալ:

Կենսաթոշակային նպաստների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10035-AM) *Retirement Benefits*:

Հաշմանդամության նպաստներ

Եթե Դուք չեք կարող աշխատել Ձեր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառով, որը ակնկալվում է, որ կտևի առնվազն մեկ տարի կամ կհանգեցնի մահվան, ապա Դուք կարող եք իրավունակ լինել Social Security հաշմանդամության նպաստներ ստանալու համար:

Մեր հաշմանդամության կանոնները տարբերվում են մասնավոր և այլ պետական գործակալությունների ծրագրերից: Մեկ այլ գործակալության կամ ծրագրի կողմից հաշմանդամության համար որակավորվելը չի նշանակում, որ Դուք մեզ մոտ իրավունակ կլինեք հաշմանդամության նպաստներ ստանալու համար: Ձեր բժշկից բերված փաստաթուղթը, որտեղ ասվում է, որ Դուք հաշմանդամ եք, չի նշանակում, որ Դուք ավտոմատ կերպով իրավունակ կլինեք Social Security հաշմանդամության նպաստներ ստանալու համար: Social Security հաշմանդամության նպաստների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10029-AM) *Disability Benefits*: Social Security հաշմանդամության նպաստներ ստանալու համար Դուք կարող եք դիմել մեր կայքում՝ **www.socialsecurity.gov/benefits** հասցեով:

Անձինք, ներառյալ երեխաները, ովքեր քիչ եկամուտ և պակաս հնարավորություններ ունեն, և ովքեր հաշմանդամ են, կարող են իրավունակ լինել հաշմանդամության վճարումներ ստանալու համար Supplemental Security Income (SSI) (Լրացուցիչ ապահովության եկամուտ) ծրագրի միջոցով: SSI-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք Supplemental Security Income (SSI) (Publication No. 05-11000-AM):

Եթե Դուք հաշմանդամ դառնաք, հնարավորինս շուտ դիմեք հաշմանդամության նպաստների համար, քանզի հիմնականում հաշմանդամության պահանջի մշակման համար մի քանի ամիս է հարկավոր: Մենք միգուցե կարողանանք ավելի արագ մշակել Ձեր պահանջը, եթե դիմելիս Դուք ունեք հետևյալը՝

- Բժշկական արձանագրություններ և բուժման օրեր՝ բերված ձեր բժշկից, թերապևտից, հիվանդանոցներից, կլինիկաներից և սոցիալական աշխատողից:
- Ձեր լաբորատոր և այլ թեստերի արդյունքները:
- Ձեր բժիշկների, կլինիկաների և հիվանդանոցների անունները, հասցեները, հեռախոսահամարները և ֆաքսի համարները:
- Բոլոր դեղերի անունները, որ ընդունում եք, և
- Վերջին 15 տարվա ընթացքում Ձեր գործատուների անունները և աշխատանքային պարտականությունները:

Ձեր նպաստները կարող են հարկվել

Social Security ստացող որոշ անձինք հարկ կվճարեն իրենց նպաստներից: Մեր ներկայիս նպաստառուների մոտ 40 տոկոսը հարկեր են վճարում իրենց նպաստներից:

Դուք միգուցե ստիպված լինեք հարկեր վճարել Ձեր նպաստներից, եթե Դուք դաշնային եկամտահարկ եք ներկայացնում որպես “անհատ”, և եթե Ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է \$25,000: Եթե Դուք միասնական եկամտահարկ եք ներկայացնում, Դուք պետք է վճարեք հարկերը, եթե Ձեր և Ձեր կնոջ/ամուսնու ընդհանուր եկամուտը գերազանցում է \$32,000: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Ներքին եկամուտների ծառայության **1-800-829-3676** անվճար հեռախոսահամարով:

Նպաստներ Ձեր ընտանիքի համար

Երբ Դուք սկսեք ստանալ Social Security կենսաթոշակային կամ հաշմանդամության նպաստները, ընտանիքի այլ անդամները կարող են նույնպես իրավունակ լինել վճարներ ստանալու համար: Օրինակ՝ նպաստներ կարող են վճարվել Ձեր կնոջը/ամուսնուն:

- Եթե նա 62 կամ ավելի տարեկան է, կամ
- Ցանկացած տարիքում, եթե նա խնամում է Ձեր երեխային (երեխան պետք է 16 տարեկանից ցածր լինի կամ լինի հաշմանդամ և իրավունակ լինի Ձեր եկամտի հիման վրա Social Security նպաստներ ստանալու համար):

Նպաստներ կարող են վճարվել նաև Ձեր չամուսնացած երեխաներին, եթե նրանք.

- 18 տարեկանից ցածր են,
- 18-ից 19 տարեկան են, սակայն տարրական կամ միջնակարգ դպրոցում են սովորում որպես լրիվ դրույքով աշակերտներ, կամ
- 18 կամ ավելի տարեկան և հաշմանդամ են (հաշմանդամությունը պետք է սկսված լինի մինչև 22 տարեկանը):

Որոշակի հանգամանքներում, մենք կարող ենք նպաստներ վճարել նաև խորթ երեխային, թոռնիկին, խորթ թոռնիկին կամ որդեգրված երեխային: Եթե Դուք երեխայի ծնող դառնաք այն բանից հետո, երբ սկսել եք նպաստներ ստանալ, տեղեկացրեք մեզ երեխայի մասին, որպեսզի մենք որոշենք, թե արդյոք երեխան իրավունակ է նպաստներ ստանալու համար:

Որքա՞ն կարող է ստանալ ընտանիքի անդամը:

Յուրաքանչյուր ընտանիքի անդամ կարող է իրավունակ լինել ամսական նպաստ ստանալու համար, որը կազմում է Ձեր կենսաթոշակի կամ հաշմանդամության նպաստի կեսը: Սակայն, գոյություն ունի Ձեզ և Ձեր ընտանիքին վճարվող

ընդհանուր գումարի սահմանափակում:
Սահմանափակումը կարող է տարբեր լինել,
սակայն, հիմնականում, այն հավասար է Ձեր
կենսաթոշակային կամ հաշմանդամության
նպաստի 150-ից 180 տոկոսին:

Եթե Դուք ամուսնալուծված եք

Եթե Դուք ամուսնալուծված եք, Ձեր նախկին
կինը/ամուսինը կարող է որակավորվել
նպաստներ ստանալու համար՝ Ձեր եկամտի
հիման վրա: Որոշ դեպքերում, նա կարող
է նպաստներ ստանալ անգամ եթե Դուք
դրանք չեք ստանում: Որակավորվելու համար,
ամուսնալուծված կինը/ամուսինը պետք է՝

- Ամուսնացած լինի Ձեզ հետ առնվազն
10 տարի,
- Ամուսնալուծված լինի առնվազն երկու
տարի, այն դեպքերում, երբ Դուք չեք դիմել
նպաստների համար,
- Լինի առնվազն 62 տարեկան,
- Ամուսնացած չլինի, և
- Կախված հանգամանքներից, իրավունակ
չլինի նպաստ ստանալու համար իր
սեփական աշխատանքի հիման վրա, որը
հավասար կամ ավելի շատ է Ձեր եկամտի
հիման վրա ստացվելիք գումարի կեսին:

Ժառանգորդների նպաստներ

Երբ Դուք մահանաք, Ձեր ընտանիքը կարող
է իրավունակ լինել նպաստներ ստանալու
համար՝ Ձեր աշխատանքի հիման վրա:

Ընտանիքի անդամները, ովքեր կարող են
նպաստներ ստանալ, ներառում են այրի
տղամարդը կամ այրի կինը, ով՝

- 60 կամ ավելի տարեկան է, կամ
- 50 կամ ավելի տարեկան և հաշմանդամ է,
կամ
- Ցանկացած տարիքի է, եթե նա խնամում
է Ձեր երեխային, ով 16 տարեկանից ցածր
է կամ հաշմանդամ է և իրավունակ է
Ձեր եկամտի հիման վրա Social Security
նպաստներ ստանալու համար:

Ձեր երեխաները կարող են նույնպես
նպաստներ ստանալ, եթե նրանք
ամուսնացած չեն և՝

- 18 տարեկանից ցածր են, կամ
- 18-ից 19 տարեկան են, սակայն
տարրական կամ միջնակարգ դպրոցում
են սովորում որպես լրիվ դրույքով
աշակերտներ, կամ
- 18 կամ ավելի տարեկան և հաշմանդամ
են (հաշմանդամությունը պետք է սկսված
լինի մինչև 22 տարեկանը):

Բացի այդ, Ձեր ծնողները կարող են
նպաստներ ստանալ Ձեր եկամուտների
հիման վրա, եթե իրենց ապրուստի առնվազն
կեսը գտնվում էր Ձեր խնամակալության
տակ:

Մեկանգամյա վճարում մահվանից հետո

Եթե Դուք բավարար միավորներ ունեք,
ապա Ձեր մահվանից հետո նույնպես կարող
է կատարվել մեկանգամյա \$255 վճարում:
Այս նպաստը կարող է վճարվել Ձեր կնոջը/
ամուսնուն կամ անչափահաս երեխաներին,
եթե նրանք համապատասխանում են
պահանջներին:

Եթե Դուք ամուսնալուծված եք և ունեք ժառանգորդ նախկին կին/ ամուսին

Եթե Դուք ամուսնալուծված եք, Ձեր նախկին
կինը/ամուսինը կարող է որակավորվել
ժառանգորդի նպաստներ ստանալու
համար՝ Ձեր եկամտի հիման վրա, երբ
Դուք մահանաք: Նրանք պետք է՝

- Լինեն առնվազն 60 տարեկան (կամ
50, եթե հաշմանդամ են) և նախկինում
ամուսնացած լինեն Ձեզ հետ առնվազն
10 տարվա ընթացքում, կամ
- Ցանկացած տարիքի, եթե նրանք
խնամում են երեխայի, ով իրավունակ է
նպաստ ստանալու համար՝ Ձեր եկամտի
հիման վրա, և

- Իրավունակ չեն նպաստ ստանալու համար իրենց սեփական աշխատանքի հիման վրա, որը հավասար կամ ավելի բարձր է Ձեր հաշվի ամբողջական ապահովագրական գումարից, և
- Ներկայումս ամուսնացած չլինեն, բացառությամբ, եթե ամուսնությունը տեղի է ունեցել 60 տարեկանից հետո կամ 50 տարեկանից հետո, եթե հաշմանդամ է:

Նախկին կնոջը/ամուսնուն վճարվող նպաստները չեն ազդի Ձեր եկամտի հիման վրա նպաստ ստացող այլ ժառանգորդների նպաստների դրույքաչափերի վրա:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Եթե Դուք մահանաք եք և Ձեր նախկին կինը/ամուսինը կրկին ամուսնանա 60 տարեկանից հետո, նրանք կարող են իրավունակ լինել Social Security նպաստներ ստանալու համար կամ Ձեր աշխատանքի հիման վրա, կամ նոր ամուսնու/կնոջ աշխատանքի հիման վրա` որը որ ավելի բարձր կլինի:

Որքա՞ն կստանան Ձեր ժառանգորդները:

Ձեր ժառանգորդները կստանան Ձեր հիմնական Social Security նպաստի տոկոսային մասը` հիմնականում 75-ից 100 տոկոս յուրաքանչյուրի համար: Սակայն, գոյություն ունի Ձեր ընտանիքին վճարվող գումարի սահմանափակում: Սահմանափակումը կարող է տարբեր լինել, սակայն, հիմնականում, այն հավասար է Ձեր նպաստի դրույքաչափի 150-ից 180 տոկոսին:

Երբ պետք է դիմեք նպաստներ ստանալու համար

Նպաստների համար Դուք պետք է դիմեք մոտ չորս ամիս առաջ այն ամսաթվից, երբ ցանկանում եք, որ սկսվեն նպաստների վճարումները: Եթե Դուք պատրաստ չեք թոշակի անցնելու, սակայն մտածում եք ավելի ուշ այդ անել, Դուք պետք է այցելեք մեր կայքը, որպեսզի օգտվեք թոշակի անցնելու տեղեկատվական պլանավորողից՝

www.socialsecurity.gov/benefits հասցեով:

Հաշմանդամության կամ ժառանգորդների նպաստներ ստանալու համար Դուք պետք է դիմեք իրավունակ դառնալուց հետո հնարավորինս շուտ:

Նպաստներ ստանալու համար Դուք կարող եք դիմել մեր կայքի միջոցով՝ www.socialsecurity.gov/applyforbenefits հասցեով:

Դուք արագ և հեշտ կարող եք ստանալ նպաստի նախնական հաշվարկ՝ հիմնված Ձեր Social Security եկամուտների գրառումների վրա

www.socialsecurity.gov/estimator:

Դուք կարող եք նպաստների ավելի մանրամասն հաշվարկներ ստանալ www.socialsecurity.gov/planners հասցեով:

Ինչ է Ձեզ հարկավոր դիմելու համար

Երբ Դուք դիմում եք նպաստների համար, մենք կհնդրենք տրամադրել որոշակի փաստաթղթեր: Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը կախված են նպաստի այն տեսակից, որի համար Դուք դիմում եք: Մեզ արագ կերպով այդ փաստաթղթերի տրամադրումը կօգնի արագ վճարել Ձեր նպաստները: Դուք պետք է ներկայացնեք փաստաթղթերի բնօրինակները կամ դրանք տվող գրասենյակի կողմից վավերացված կրկնօրինակները. մենք լուսապատճեններ չենք ընդունում:

Մի ուշացրեք դիմումի ներկայացումը՝ միայն անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը չունենալու պատճառով: Մենք կօգնենք Ձեզ ձեռք բերել դրանք:

Ահա որոշ փաստաթղթեր, որոնց կարիքը կարող եք ունենալ Social Security-ի համար գրանցվելիս՝

- Ձեր Social Security քարտը (կամ Ձեր համարի արձանագրությունը),
- Ձեր ծննդյան վկայականը,

- Ձեր երեխաների ծննդյան վկայականները և Social Security համարները (եթե դիմում եք նրանց համար),
- ԱՄՆ քաղաքացիության կամ օրինական ներգաղթյալի կարգավիճակի ապացույց, եթե Դուք (կամ երեխան) չեք ծնվել United States-ում:
- Ձեր կնոջ/ամուսնու ծննդյան վկայականը և Social Security համարը, եթե նա դիմում է նպաստների համար Ձեր եկամտի հիման վրա:
- Ձեր ամուսնության վկայականը (եթե գրանցվում եք ամուսնու/կնոջ եկամտի հիման վրա կամ եթե Ձեր ամուսինը/կինը գրանցվում է Ձեր եկամտի հիման վրա),
- Չինվորական ծառայությունից ազատվելու փաստաթղթեր, եթե զինվորական ծառայության եք եղել, կամ
- Ձեր ամենավերջին W-2 ձևը կամ հարկային հայտարարագիրը, եթե ինքնազբաղված եք:

Դիմելիս՝ մենք Ձեզ կտեղեկացնենք, եթե այլ փաստաթղթերի կարիքն ունենանք:

Ինչպես ենք մենք վճարում նպաստները

Դուք պետք է ստանաք Ձեր Social Security վճարումները էլեկտրոնային տարբերակով: Տարբերակներից մեկը, որ կարող եք ընտրել Ձեր նպաստները ստանալու համար, դա ուղղակի ավանդն է Ձեր բանկային հաշվում: Ուղղակի ավանդը հեշտ, անվտանգ միջոց է նպաստներ ստանալու համար: Դիմելիս՝ անպայման Ձեզ հետ ունեցեք չեկի գրքույկը կամ հաշվի հայտարարագիրը: Մեզ հարկավոր են այդ դեղեկությունները, ինչպես նաև Ձեր ֆինանսական հաստատության բանկային կոդը, որպեսզի վստահ լինենք, որ ամսական ավանդը գնում է ճիշտ հաշվի վրա:

Եթե ֆինանսական հայտատուությունում հաշիվ չունեք, կամ եթե նախընտրում եք Ձեր նպաստները ստանալ կանխավճարային բանկային քարտի վրա, Դուք կարող եք գրանցվել Direct Express® քարտային

ծրագիր համար: Direct Express®-ի դեպքում, վճարումները ուղղակի փոխանցվում են քարտի հաշվի վրա: Մեկ այլ տարբերակ, որ կարող եք նկատի ունենալ՝ դա էլեկտրոնային փոխանցման հաշիվն է: Այս ցածր վճարով, դաշնության կողմից ապահովագրված հաշիվը Ձեզ թույլ է տալիս վայելել ավտոմատ վճարումների անվտանգությունն ու հարմարավետությունը:

Supplemental Security Income (SSI) ծրագիր

Եթե Դուք ստանում եք Social Security նպաստներ, սակայն սահմանափակ եկամուտ և հնարավորություններ (բաներ, որ Ձեզ են պատկանում) ունեք, SSI կարող է օգնել: SSI ֆինանսները գալիս են ընդհանուր եկամուտներից, և ոչ թե Social Security հարկերից:

SSI ամսական վճարումներ է կատարում 65 և ավելի տարիքի անձանց, ովքեր կույր կամ հաշմանդամ են: SSI-ի համար Ձեր իրավունակությունը որոշելիս՝ մենք չենք հաշվարկում որոշ Ձեր եկամուտներն ու հնարավորությունները: Օրինակ՝ Ձեր տունն ու ավտոմեքենան հիմնականում չեն հաշվարկվում որպես հնարավորություն:

Որպեսզի դիմեք SSI-ի համար, Դուք կարող եք սկսել գործընթացը և, որոշ դեպքերում, լրացնել Ձեր դիմումի մեծ մասն՝ այցելելով մեր կայք՝ **www.socialsecurity.gov/applyforbenefits** հասցեով: Դուք կարող եք նաև զանգահարել մեզ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով՝ Ձեր տեղական Social Security գրասենյակի ներկայացուցչի հետ դեմ-ար-դեմ կամ հեռախոսային ժամադրություն նշանակելու համար:

Բողոքարկելու իրավունք

Եթե Դուք համաձայն չեք Ձեր պահանջի վերաբերյալ կայացրած որոշման հետ, Դուք կարող եք բողոքարկել այն: Ձեր կատարելիք

քայլերի բացատրության համար ընթերցեք (Publication No. 05-10041-AM) *The Appeals Process*:

Դուք կարող եք ինքներդ հանդես գալ Ձեր բողոքարկման համար՝ Social Security-ից անվճար օգնությամբ, կամ կարող եք ներկայացուցիչ ունենալ, որ օգնի Ձեզ: Մենք կարող ենք Ձեզ տեղեկություններ տրամադրել այն կազմակերպությունների մասին, ովքեր կարող են օգնել Ձեր ներկայացուցիչ գտնելու հարցում: Ներկայացուցիչ ընտրելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10075-AM) *Your Right to Representation*:

Առցանց “my Social Security” հաշիվ

Դուք կարող եք հեշտությամբ ստեղծել անվտանգ առցանց my Social Security հաշիվ՝ Ձեր Social Security հայտարարագիրը տեսնելու, Ձեր եկամուտները ստուգելու և նպաստների նախնական հաշվարկները ստանալու համար: Դուք կարող եք նաև օգտվել Ձեր առցանց my Social Security հաշվից՝ Social Security հաշվից քարտի փոխարինում խնդրելու համար (հասանելի է որոշ նահանգներում և Կոլումբիայի շրջանում): Եթե Դուք նպաստներ եք ստանում, Դուք կարող եք նաև՝

- Ստանալ Ձեր նպաստների հաստատման նամակ,
- Փոխել Ձեր հասցեն և հեռախոսահամարը,
- Խնդրել Medicare քարտի փոխարինում,
- Խնդրել SSA-1099-ի կամ SSA-1042S-ի փոխարինում հարկերի սեզոնի համար, կամ
- Սկսել կամ փոխել Ձեր ուղղակի ավանդը:

Դուք կարող եք ստեղծել my Social Security հաշիվ, եթե Դուք 18 կամ ավելի տարեկան եք, ունեք Social Security համար, վավերական էլ. հասցե և ԱՄՆ փոստային հասցե: Հաշիվ ստեղծելու համար այցելեք **www.socialsecurity.gov/myaccount**: Կարող եք հարկավոր լինել, որ Դուք տրամադրեք

որոշակի անձնական տեղեկություններ, որպեսզի հաստատեք Ձեր ինքնությունը, և հետո ընտրեք օգտանուն և գաղտնաբառ:

Medicare

Medicare-ը մեր երկրի հիմնական առողջության ապահովագրության ծրագիրն է 65 կամ ավելի տարիքի անձանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Դուք չպետք է շփոթեք Medicare ծրագիրը Medicaid ծրագրի հետ: Medicaid-ը առողջապահական խնամքի ծրագիր է՝ ցածր եկամուտ և սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար: Medicaid ծրագիրը կառավարում են նահանգի առողջապահության և հանրային ծառայությունների գրասենյակները կամ սոցիալական ծառայությունների գործակալությունները: Որոշ մարդիկ որակավորվում են միայն մեկ ծրագրի համար, մինչ մյուսները որակավորվում են և՛ Medicare-ի, և՛ Medicaid-ի համար:

Medicare-ը բաղկացած է չորս մասից

- Medicare Մաս A (հիվանդանոցային ապահովագրություն) օգնում է վճարել ստացիոնար հիվանդանոցային խնամքի և որոշ հետբուժական ծառայությունների համար:
- Medicare Մաս B (բժշկական ապահովագրություն) օգնում է վճարել բժիշկների ծառայությունների, ամբուլատոր հիվանդանոցային խնամքի կամ այլ բժշկական ծառայությունների համար:
- Medicare Մաս C (Medicare Advantage ծրագրեր) հասանելի են բազմաթիվ վայրերում: Medicare Մասեր A և B ունեցող անձինք կարող են ստանալ իրենց առողջապահական խնամքի բոլոր ծառայությունները այս ապահովագրությունը տրամադրող Medicare-ի կողմից հաստատված մասնավոր ապահովագրական ընկերություններից:

- Medicare Մաս D (Medicare դեղատոմսով դեղերի ապահովագրություն) օգնում է ապահովագրել դեղատոմսով դեղերի արժեքը:

Ո՞վ է իրավունակ Medicare Մաս A-ի համար:

Մարդկանց մեծ մասը ստանում է Մաս A-ն, երբ նրանք դառնում են 65 տարեկան: Դուք ավտոմատ կերպով որակավորվում եք դրա համար, եթե Դուք իրավունակ եք Social Security կամ Railroad Retirement Board նպաստներ ստանալու համար: Կամ Դուք կարող եք որակավորվել Ձեր ամուսնու/կնոջ (ներառյալ ամուսնալուծված ամուսնու/կնոջ) աշխատանքի հիման վրա: Մյուսները որակավորվում են, քանզի նրանք պետական պաշտոնյաներ են, որոնք ապահովագրված չեն Social Security-ի կողմից և վճարել են Medicare հարկ:

Եթե Դուք ստանում եք Social Security հաշմանդամության նպաստներ 24 ամիս շարունակ, Դուք որակավորվում եք Մաս A-ի համար:

Եթե Դուք Social Security հաշմանդամության նպաստներ եք ստանում, քանզի ունեք amyotrophic lateral sclerosis (Lou Gehrig's disease) - Ամիոտրոֆիկ լատերալ սկլերոզ, ապա որակավորվելու համար Դուք ստիպված չեք լինի սպասել 24 ամիս:

Բացի այդ, մարդիկ, ովքեր դիալիզ պահանջող երիկամների մշտական հիվանդություն կամ երիկամների փոխպատվաստում ունեն, որակավորվում են Մաս A-ի համար, եթե նրանք բավական երկար աշխատել են, կամ եթե նրանք հանդիսանում են բավական երկար աշխատած անձի ամուսին/կին կամ երեխա:

Եթե չեք համապատասխանում այս պահանջներին, Դուք կարող եք ստանալ Medicare հիվանդանոցային ապահովագրություն՝ ամսական

ապահովագին վճարելով: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեր անվճար համարով կամ այցելեք մեր կայք:

Շրջակա միջավայրի առողջական վտանգներին ենթարկված անձինք իրավունք ունեն Մաս A-ի համար և կարող են անդամագրվել Մաս B-ին և Մաս D-ին: Այս մարդիկ ունեն ազբեստի հետ կապված հիվանդություն և առնվազն 6 ամիս ներկա են եղել Մոնտանայի Լինկոլն վարչաշջանում՝ ախտորոշումից 10 տարի առաջ կամ ավելին:

Ո՞վ է իրավունակ Medicare Մաս B-ի համար:

Գրեթե յուրաքանչյուր անձ, ով իրավունակ է Մաս A-ի համար, կարող է ստանալ Մաս B-ն: Մաս B կամընտիր է և Դուք, սովորաբար, ամսական ապահովագին եք վճարում: 2018թ.-ին ստանդարտ ամսական ապահովագինը կազմում է \$134.00: Ավելի բարձր եկամուտ ունեցողներն ավելի բարձր ապահովագին են վճարում:

Ո՞վ կարող է Medicare Մաս C ստանալ:

Ցանկացած մեկը, ով ստանում է Medicare Մաս A-ն և Մաս B-ն, կարող է անդամակցել Medicare Advantage ծրագրին: Medicare Advantage ծրագրերը ներառում են՝

- Medicare կառավարվող ինսամքի ծրագրեր
- Medicare preferred provider organization (PPO) ծրագրեր
- Medicare մասնավոր վճարովի ծառայություններով ծրագրեր
- Medicare մասնագիտացված ծրագրեր

Ի լրումն Ձեր Medicare Մաս B ապահովագին, Դուք կարող եք վճարել մեկ այլ ամսական ապահովագին՝ Medicare Advantage ծրագրի կողմից առաջարկվող լրացուցիչ նպաստների համար:

Ո՞վ կարող է Medicare Մաս D ստանալ:

Ցանկացած մեկը, ով ստանում է Medicare Մաս A կամ Medicare Մաս B, իրավունակ է դեղատոմսով դեղերի ապահովագրություն ստանալու համար: Medicare Մաս D-ն կամընտիր է, և Դուք ապահովագրության համար վճարում եք լրացուցիչ ամսական ապահովագին: Ավելի բարձր եկամուտ ունեցողներն ավելի բարձր ապահովագին են վճարում: Շատերը իրենց Մաս D ապահովագրությունը ստանում են Medicare Advantage ծրագրի միջոցով:

Ե՞րբ է հարկավոր դիմել Medicare-ի համար:

Եթե Դուք դեռևս նպաստներ չեք ստանում, Դուք պետք է կապվեք Social Security-ի հետ Ձեր 65րդ տարեդարձից մոտ երեք ամիս առաջ, որպեսզի գրանցվեք Medicare-ի համար: Դուք պետք է գրանցվեք Medicare-ի համար անգամ եթե չեք պատրաստվում թոշակի անցնել 65 տարեկանից:

Եթե Դուք ստանում եք Social Security նպաստներ կամ Railroad Retirement Board վճարումներ, մենք Ձեզ հետ կկապվենք Medicare-ի համար իրավունակ դառնալուց մի քանի ամիս առաջ և Ձեզ տեղեկություններ կուղարկենք: Եթե Դուք ապրում եք 50 նահանգներից մեկում, Վաշինգտոնում, Կոլումբիայի շրջանում, Հյուսիսային Մարիլանդ կղզիներում, Գուլամում, Ամերիկյան Սամոայում կամ ԱՄՆ Վիրջինյան կղզիներում, մենք ավտոմատ կերպով կանդամագրենք Ձեզ Medicare Մասեր A և B-ի համար: Սակայն, քանի որ Դուք պետք է ապահովագին վճարեք Մաս B-ի ապահովագրության համար, Դուք կարող եք մերժել այն:

Մենք ավտոմատ կերպով **չենք** անդամագրի Ձեզ Medicare-ի դեղատոմսով դեղերի ծրագրին (Մաս D): Մաս D կամընտիր է, և Դուք պետք է ընտրեք այս ապահովագրությունը: Medicare-ի մասին

ամենավերջին տեղեկությունների համար այցելեք կայք կամ զանգահարեք ստորև նշված անվճար հեռախոսահամարով:

Medicare	Կայքը՝ www.Medicare.gov Անվճար հեռախոսահամարը՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) TTY հեռախոսահամարը՝ 1-877-486-2048
-----------------	--

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Եթե Դուք իրավունակ դառնալիս չեք անդամագրվել Մաս B և Մաս D-ի համար, Դուք հնարավոր է ուշացած անդամագրման համար տուգանք վճարեք այնքան ժամանակ, որքան ունենաք Մաս B և Մաս D ապահովագրությունը: Բացի այդ, Դուք հնարավոր է, որ սպասեք անդամագրման համար, ինչը կհետաձգի ապահովագրությունը:

Պու՛րտո Ռիկոյի կամ արտասահմանյան երկրների բնակիչները չեն ստանում Մաս B-ն ավտոմատ կերպով: Նրանք պետք է ընտրեն այս նպաստը: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք Medicare (Publication No. 05-10043-AM):

Եթե Դուք ունեք Health Savings Account (HSA)

Եթե Դուք HSA ունեք՝ Medicare-ի համար գրանցվելիս, ապա Դուք չեք կարող ներդրումներ կատարել Ձեր HSA-ում, երբ սկսվի Ձեր Medicare ապահովագրությունը: Եթե Դուք ներդրումներ կատարեք HSA -ում Medicare ապահովագրությունը սկսվելուց հետո, ապա Դուք կարող եք հարկային տուգանք վճարեք: Եթե ցանկանում եք ներդրումներ կատարել HSA-ում, Դուք չպետք է դիմեք Medicare, Social Security կամ Railroad Retirement Board (RRB) նպաստների համար:

ԾԱՆՈՒԹՈՒՄ. Ապահովագին չունեցող Մաս A-ի ապահովագրությունը սկսվում է Medicare-ի (կամ Social Security/RRB նպաստների) համար դիմելու ամսաթվից 6 ամիս հետո, սակայն ոչ շուտ, քան Medicare-ի համար Ձեր իրավունակության առաջին ամիսը: Հարկային տուգանքից խուսափելու

համար, Դուք պետք է դադարեք ներդրում կատարել Ձեր HSA-ի մեջ՝ Medicare-ի համար դիմելուց առնվազն 6 ամիս առաջ:

“Extra Help”՝ Medicare-ի դեղատոմսով դեղերի արժեքների հետ կապված

Եթե Դուք սահմանափակ եկամուտ և հնարավորություններ ունեք, Դուք կարող եք որակավորվել Extra Help-ի համար, որպեսզի կարողանաք վճարել Ձեր դեղատոմսով դեղերի համար՝ Medicare Մաս D-ի ներքո: Social Security-ի դերն է՝ օգնել Ձեզ հասկանալ, թե ինչպես կարող եք որակավորվել և մշակել Ձեր դիմումը Extra Help համար: Իմանալու համար, թե արդյոք որակավորվում եք կամ դիմելու համար զանգահարեք Social Security-ի անվճար հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքը՝ www.socialsecurity.gov/extrahelp:

Օգնություն Medicare-ի այլ ծախսերի հարցում

Եթե Դուք քիչ եկամուտ և սահմանափակ հնարավորություններ ունեք, Ձեր նահանգը կարող է վճարել Ձեր Medicare ապահովագրությունը և, որոշ դեպքերում, “գրպանից վճարվող” այլ բժշկական ծախսերը, ինչպիսիք են՝ չապահովագրված գումարը և համաապահովագրությունը:

Միայն Ձեր նահանգը կարող է որոշել, թե արդյոք Դուք որակավորվում եք այս ծրագրի ներքո օգնություն ստանալու համար: Եթե կարծում եք, որ Դուք ենթակա եք որակավորման, կապվեք Ձեր Medicaid-ի, սոցիալական ծառայությունների կամ առողջապահության և հանրային ծառայությունների գրասենյակի հետ: Այցելեք www.Medicare.gov/contacts կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227; TTY՝ 1-877-486-2048) իրենց համարը ստանալու համար:

Որոշ փաստեր Social Security-ի վերաբերյալ

2018թ. Ձեր Social Security հարկերը

- Դուք վճարում եք 6.2 տոկոս, և Ձեր գործատուն վճարում է 6.2 տոկոս:
- Եթե Դուք ինքնագրաված եք, Դուք վճարում եք 12.4 տոկոս:
- Դուք Social Security հարկեր չեք վճարում \$128,400-ից բարձր եկամտի համար:

2018թ. Medicare հարկեր

- Դուք և Ձեր գործատուն յուրաքանչյուրը վճարում եք 1.45 տոկոս:
- Եթե Դուք ինքնագրաված եք, Դուք վճարում եք 2.9 տոկոս:
- Medicare հարկերը վճարվում են Ձեր բոլոր եկամուտների համար, սահմանափակում չկա:
- Բարձր եկամուտ ունեցող աշխատողների համար կան լրացուցիչ Medicare հարկեր:

Աշխատանքային միավորներ 2018թ.-ին

- Ձեր յուրաքանչյուր վաստակած \$1,320 համար Դուք ստանում եք մեկ Social Security “միավոր”, տարեկան մինչև չորս միավոր:
- Մարդկանց մեծ մասին հարկավոր է 40 միավոր, որպեսզի սրանք իրավունակ լինեն կենսաթոշակային նպաստներ ստանալու համար:
- Երիտասարդներին ավելի քիչ միավորներ են հարկավոր, որպեսզի իրավունակ դառնան՝ հաշմանդամության նպաստներ ստանալու համար, կամ որպեսզի իրենց ընտանիքի անդամները իրավունակ լինեն ժառանգորդի նպաստներ ստանալու համար:

2018թ.-ի միջին ամսական Social Security նպաստներ

- Թոշակի անցած աշխատող՝ \$1,404
- Թոշակի անցած աշխատող՝ ծերացած կնոջ/ամուսնու հետ՝ \$2,340
- Հաշմանդամ աշխատող՝ \$1,197
- Հաշմանդամ աշխատող՝ երիտասարդ կնոջ/ամուսնու և մեկ կամ ավելի երեխաների հետ՝ \$2,054
- Ծերացած այրի կին կամ տղամարդ՝ \$1,338
- Երիտասարդ այրի կին կամ տղամարդ՝ երկու երեխաներով՝ \$2,743

2018թ. SSI վճարման ամսական դրույքաչափեր

(Զի ներառում է սահանգային լրացուցիչ վճարը, եթե այն կա)

- \$750 մեկ անձի համար
- \$1,125 զույգի համար:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելեք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնություններ վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Լշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելեք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր

TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778**
հեռախոսահամարով՝ լսողության հետ
խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք
ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել
Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ
Ժամը առավոտյան 07:00-ից մինչև
երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր
համբերատարությունը ծանրաբեռնված
շրջաններում, քանի որ Դուք կարող եք
ունենալ սովորականից ավելի հաճախ
ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան
և ավելի երկար սպասելաժամանակ մեզ
հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք
սպասարկել Ձեզ:



Securing today
and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10024-AM | January 2018

Նպաստները հասկանալը
Understanding the Benefits (Armenian)

Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: